Արձանագրություն N 2

Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2025 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀԾՀԽ-2025/43 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» «մայիսի» 2025թ.
ժամը 12:00

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **երեք** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ինեսսա Ասմանգուլյանը, իսկ քարտուղարն էր՝ Լիլիա Չախոյանը:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ի. Ասմանգուլյան
Հանձնաժողովի անդամներ	Ա. Գևորգյան, Վ. Վահանյան
Հանձնաժողովի քարտուղար	Լ. Չախոյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

Ընդունել ի գիտություն, որ 2025 թվականի ապրիլի 28-ին հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի մայիսի 12-ին ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը 2025 թվականի մայիսի 13-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի մայիսի 14-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ՝ մասնակիցների կողմից հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1.	Մատակարար	-	00000005
2.	Երմեդ ՍՊԸ	adamyanerem@yahoo.com	04721572
3.	Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
4.	ԷՄՀԱՐ ՍՊԸ	emharllc@gmail.com	08285951
5.	ՅՈՒՆԻՄԵԴ ՍՊԸ	unimed7@yandex.ru	01806887

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Առաջին տեղ զբաղեցրած «Մատակարար» -ի հայտում բացակայում է հրավերով պահանջված փաստաթղթերը, հայտի ապահովումը: «Մատակարար» -ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար և ենթակա է մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀԾՀԽ-2025/43» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀԾՀԽ-2025/43» ծածկագրով գնման ընթացակարգի համար սահմանել անգործության ժամկետ սահմանել 10 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ

Ինեսսա Ասմանգուլյան _____

անդամներ՝

Վահան Վահանյան _____

Արթուր Գևորգյան _____

քարտուղար՝

Լիլիա Չախոյան _____